ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն 0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13[ա], հեռ.՝(011) 90 00 02

№ 18-1500-25
«05» 05 2025 թ.

Հայաստանի Հանրապետության
գլխավոր հարկադիր կատարող
Սիրո Ամիրխանյանին

Հարգելի՛ պարոն Ամիրխանյան

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ և ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության ողջ անձնակազմին Հարկադիր կատարողի մասնագիտական օրվա և ծառայության կազմավորման 27-ամյակի կապակցությամբ:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը կարևոր առաքելություն է վերապահված դատաիրավական համակարգում՝ նպաստել արդարադատության իրականացմանը Հայաստանի Հանրապետությունում՝ հանդես գալով պետության, իրավունքի, անհատների ու կազմակերպությունների օրինական շահերի պաշտպանության օգտին:

Այդ տեսանկյունից շատ կարևոր է վերջին տարիներին ծառայության նկատմամբ հանրային վստահության մակարդակի բարձրացումը, որն աստիճանաբար ավելի նկատելի է դառնում կառույցի բարեփոխված աշխատանքի, թափանցիկ ու հաշվետվողական գործելաոճի արդյունքում: Դրա շնորհիվ հանրության շրջանում արդեն ձևավորվել է այն համոզմունքը, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը գործում է հանուն քաղաքացու և հանուն օրենքի՝ մեծ դերակատարում ունենալով արդարության վերականգնմանը հասնելու ճանապարհին:

Վստահ եմ, որ ծառայության աշխատակիցներն իրենց նվիրված ու բարեխիղճ աշխատանքով, պրոֆեսիոնալիզմով և բարձր պատասխանատվությամբ կշարունակեն նոր որակ հաղորդել կառույցի առաքելության իրագործմանն ու հարկադիր կատարողի դերի հանրային ընկալմանը:

Կրկին շնորհավորելով՝ մաղթում եմ հաջողություն, բարեկեցություն և անփորձանք ծառայություն՝ հանուն Հայաստանի Հանրապետության:

Հարգանքով՝

Արդարադատության առաջին դասի խորհրդական **Արթուր Նահապետյան**